

**ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ  
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ**

**Համայնքի 2019 թվականի**

**ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ**



**Կազմել է համայնքի ղեկավար Սարգիս Մուրադյանը**

**Հաստատվել է համայնքի ավագանու՝ 12.03.2019թ. թիվ 13 -Ա որոշմամբ**

**Սևան 2019թ.**

## **Բովանդակություն**

<b>ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ</b> -----	<b>3</b>
<b>1. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՍԼԱԿԱՆԸ ԵՎ ՈԼՈՐՏԱՅԻՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ</b> -----	<b>4</b>
<b>2. ՀԱՄԱՅՆՔԻ 2019Թ. ԾՐԱԳՐԵՐԻ ՑԱՆԿԸ ԵՎ ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ ՀԵՆՔԵՐԸ (ԸՍՏ ՈԼՈՐՏՆԵՐԻ) -----</b>	<b>5-25</b>
<b>3. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ 2019Թ. ԾՐԱԳԻՐԸ -----</b>	<b>26-27</b>
<b>4. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՊ-Ի ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՊԼԱՆԸ -----</b>	<b>28-29</b>
<b>5. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՊ-Ի ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՊԼԱՆԸ -----</b>	<b>30-43</b>

## **Ներածություն**

Սևան համայնքի 2019 թվականի տարեկան աշխատանքային պլանի (**ՏԱՊ**) մշակման հիմնական նպատակն է՝ ապահովել համայնքի ավագանու կողմից 2017թ. հաստատված համայնքի հնգամյա զարգացման ծրագրով (**ՀՀԶԾ-ով**) սահմանված համայնքի տեսլականի, ռազմավարության, ոլորտային նպատակների և ծրագրերի իրագործումը:

Հիմք ունենալով համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը՝ **ՏԱՊ-ն** ուղղված է հստակեցնելու 2019թ-ին համայնքի զարգացմանն ուղղված ծրագրերը և միջոցառումները, դրանց իրականացման համար ներդրվող ռեսուրսներն ու ժամկետները: Որպես համայնքի տարեկան ծրագրային փաստաթուղթ՝ այն նպատակ ունի ներգրավել համայնքի ներքին և արտաքին ներդրողների հնարավորությունները:

**ՏԱՊ-ի** մշակման մեթոդական հիմք է հանդիսացել Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀԸ) ֆինանսավորմամբ «Համայնքների ֆինանսիստների միավորում» ՀԿ-ի փորձագետների կողմից 2017 թվականին պատրաստած «Համայնքի տարեկան աշխատանքային պլանի մշակում» մեթոդական ուղեցույցը:

### **ՏԱՊ-ը բաղկացած է 5 բաժիններից.**

**1-ին բաժնում** ներկայացված են համայնքի տեսլականը, համայնքի կայուն զարգացման ցուցանիշները (**Աղյուսակ 1**), ոլորտային նպատակները (**Աղյուսակ 2**):

**ՏԱՊ-ի 2-րդ բաժնում** ներկայացված են համայնքի 2018 թվականի համապատասխան ֆինանսական միջոցներով ապահովված ծրագրերը (**Աղյուսակ 3**) և այդ ծրագրերի տրամաբանական հենքերը՝ ըստ համայնքի ղեկավարի լիազորությունների ոլորտների (**Աղյուսակ 5**), ինչպես նաև այն ծրագրերը, որոնք դեռևս ապահովված չեն համապատասխան ֆինանսական միջոցներով (**Աղյուսակ 4**):

**ՏԱՊ-ի 3-րդ բաժնում** ներկայացված է համայնքի սեփականություն հանդիսացող գույքի կառավարման 2018 թվականի ծրագիրը (**Աղյուսակ 6**):

**ՏԱՊ-ի 4-րդ բաժնում** բերված է ՏԱՊ-ի ֆինանսավորման պլանը՝ ըստ համայնքի ղեկավարի լիազորությունների ոլորտների (**Աղյուսակ 7**):

**ՏԱՊ-ի 5-րդ բաժնում (Աղյուսակ 8)** ներկայացված է տեղեկատվություն ՏԱՊ-ում ներառված յուրաքանչյուր ոլորտային ծրագրի իրականացման արդյունքային ցուցանիշների մոնիթորինգի և գնահատման վերաբերյալ:

## 1. Համայնքի տեսլականը և ոլորտային նպատակները

### Համայնքի տեսլականը՝

Իրականացվող աշխատանքների արդյունքում Սևան համայնքում ակնկալվում է բյուջեի 100 տոկոս հավաքագրման ապահովում, ներդրումների աճ, նպատակային և հասցեական ծրագրերի իրականացում, ՏԻՄ-ի կողմից մատուցվող ծառայությունների որակի բարձրացում, ներհամայնքային ենթակառուցվածքների բարելավում, միջհամայնքային համագործակցության խթանում, բնակարանային ֆոնդի պահպանությանը միտված ծրագրերի իրականացում, նախադպրոցական, արտադպրոցական, մարզամշակութային հաստատությունների շենքային պայմանների բարելավում, զբոսաշրջային գործի որակական բարելավում, հիմնական ծառայությունների հասանելիություն ունեցող տնային տնտեսությունների քանակի աճ, աշխատատեղերի ստեղծում, տեղական ռեսուրսների օգտագործման հնարավորությունների հստակեցում, բնակչության կենսամակարդակի բարձրացում, քույր քաղաքներ ցանցի ընդլայնում, նորարական գաղափարների ներդրում:

Ունենալով համայնքի՝ առաջիկա տարիների համար մատնանշված տեսլականը՝ հստակեցված են նաև զարգացման հիմնական ուղղությունները՝

- ✓ զբոսաշրջության կայուն զարգացում
- ✓ գործարար միջավայրի բարելավում
- ✓ փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացում

Այս ուղղությունների համար զարգացման խթան են դառնալու այն ծրագրերն ու ընթացիկ աշխատանքները, որոնց շնորհիվ գրանցվելու են վերը նշված փոփոխությունները:

Ստորև ներկայացված են համայնքի կայուն զարգացման ցուցանիշները:

Ցուցանիշի ելակետային արժեքը 2018 թվականին գրանցված ցուցանիշն է:

Ցուցանիշի թիրախային արժեքը համապատասխան ցուցանիշի պլանավորվող արժեքն է, այսինքն՝ այն արժեքը, որին կհասնի համայնքը 2018 թվականին ՏԱՊ-ը հաջողությամբ իրականացնելու դեպքում:

### Աղյուսակ 1. Համայնքի կայուն զարգացման ցուցանիշները

Ցուցանիշ	Ելակետային արժեք	Թիրախային արժեք
Համայնքի բյուջեի սեփական եկամուտների տեսակարար կշիռն ընդհանուր եկամուտների մեջ (%)	34.7	36.8
Համայնքում հաշվառված բնակիչների ընդհանուր թիվը (մարդ)	25.844	26.110
Համայնքում տվյալ տարվա ընթացքում ներդրումների ծավալը (հազ. դրամ)	28.420.0	65000.0
Համայնքում գործող ՓՄՁ-ների քանակը և դրանցում աշխատատեղերի թիվը (հատ)	1475/4910	1490/5050

Ստորև սահմանված են համայնքի ոլորտային նպատակները՝ ըստ համայնքի ղեկավարի լիազորությունների առանձին բնագավառների (ոլորտների):

## Աղյուսակ 2. Համայնքի ոլորտային նպատակները

Ոլորտային նպատակ	Վերջնական արդյունքի՝		
	Ցուցանիշ	Ելակետային արժեք	Թիրախային արժեք
<b>Ոլորտ 1. Ընդհանուր</b>			
Ապահովել ՏԻՄ-երի կողմից համայնքի բնակչությանը համայնքային որակյալ և մատչելի ծառայությունների մատուցումը:	ՏԻՄ-երի կողմից մատուցվող համայնքային ծառայությունների հասանելիությունը համայնքի բնակիչներին (հարցումների հիման վրա), %	75	80
	Սեփական եկամուտների տեսակարար կշիռը համայնքի բյուջեի ընդհանուր մուտքերի կազմում,%	34.7	36.8
	ՏԻՄ-երի գործունեության վերաբերյալ համայնքի բնակիչների իրազեկվածության մակարդակը (հարցումների հիման վրա), %	50	55
<b>Ոլորտ 2. Պաշտպանության կազմակերպում</b>			
Նպաստել երկրի պաշտպանունակության մակարդակի բարձրացմանը:	Համայնքում բնակվող զինապարտ քաղաքացիների գրանցամատյանի վարումը, այո/ոչ	այո	այո
	Զորակոչիկների բավարարվածությունը մատուցված ծառայություններից (հարցումների հիման վրա), %	80	85
<b>Ոլորտ 3.Արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանություն և քաղաքացիական պաշտպանության կազմակերպում</b>			
Աղետների վերաբերյալ կրթական նյութերի պատրաստում և աղետների կառավարման վերաբերյալ կրթության խթանում.  Սևան համայնքում հեղեղավտանգ և սելավավտանգ հատվածների մաքրման աշխատանքների իրականացում: Սողանքավտանգ և քարաթափվող հատվածների մաքրում, հենապատի կառուցում:	Համայնքի բնակիչների իրազեկվածության աստիճանը աղետների վերաբերյալ /%/	35	38
<b>Ոլորտ 4. Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն</b>			
Իրականացնել համայնքի բնակֆոնդի արդյունավետ կառավարումը և արտաքին լուսավորության և ջրամատակարարման ցանցերի պահպանումը:	Նորոգված տանիքներ ունեցող բազմաբնակարան շենքերի տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ, %	40	45
	Նորոգված մուտքեր ունեցող բազմաբնակարան շենքերի	70	75

	տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ, %		
	Գիշերային լուսավորված փողոցների տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ, %	75	85
	Համայնքում էներգախնայող լամպերով լուսավորված տարածքների մակերեսի տեսակարար կշիռը լուսավորված տարածքների ընդհանուր մակերեսի մեջ, %	12	18
	Համայնքի բնակիչների բավարարվածությունը մատուցված ջրամատակարարման ծառայություններից (հարցումների հիման վրա), %	90	100
<b>Ոլորտ 5. Հողօգտագործում</b>			
2019 թվականի ընթացքում ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել:	-	-	-
<b>Ոլորտ 6. Ճանապարհաշինություն</b>			
Բարելավել ներհամայնքային ճանապարհների վիճակը, ապահովել բնակիչների, տրանսպորտի անվտանգ տեղաշարժը:	Ընթացիկ նորոգված ներհամայնքային ճանապարհների և փողոցների տեսակարար կշիռն ընդհանուրի կազմում, %	70	85
	Համայնքային ենթակայության ճանապարհներին և փողոցներում տեղադրված ճանապարհային նշանների թվի տեսակարար կշիռը անհրաժեշտ ճանապարհային նշանների մեջ, %	70	75
<b>Ոլորտ 7. Առևտուր և ծառայություններ</b>			
2019 թվականի ընթացքում ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել:	Սևան համայնքի առևտրի կանոնների ներդրումից հետո առևտրի կանոնակարգման ուղղված միջոցառումները	-	30
<b>Ոլորտ 8. Կրթություն</b>			
Ապահովել համայնքի բնակչությանը նախադպրոցական կրթության և արտադպրոցական դաստիարակության որակյալ ծառայությունների մատուցումը:	Անհրաժեշտ շենքային պայմաններով ապահովված մանկապարտեզների տեսակարար կշիռը ընդհանուրի մեջ, %	80	90
	Տարվա ընթացքում մատուցված նախադպրոցական կրթության ծառայության արժեքը մեկ երեխայի հաշվով, հազ.դրամ	23.000	24.000
	Մատուցված արտադպրոցական դաստիարակության ծառայության հասանելիությունը համայնքի բնակիչներին, %	85	90
	Բնակիչների բավարարվածությունը մատուցվող արտադպրոցական դաստիարակության ծառայություններից(հարցումների հիման վրա), %	55	65
	Անհրաժեշտ շենքային պայմաններով	85	95

	ապահովված արտադարձական դաստիարակության խմբակների տեսակար կշիռը դրանց ընդհանուր թվի մեջ, %		
<b>Ոլորտ 9. Մշակույթ և երիտասարդության հետ տարվող աշխատանքներ</b>			
Կազմակերպել համայնքի մշակութային կյանքը և ապահովել որակյալ ծառայությունների մատուցումը:	Համայնքային գրադարանի առկայություն, այո/ոչ	այո	այո
	Տարվա ընթացքում գրադարանի ծառայություններից օգտված բնակիչների թվի տեսակարար կշիռը բնակիչների ընդհանուր թվի մեջ, %	- /վերանորոգման ընթացքի մեջ է/	45
	Տարվա ընթացքում թանգարան այցելած բնակիչների տեսակարար կշիռը բնակիչների ընդհանուր թվի մեջ, %	տարածքի վերանորոգումը ընթացքի մեջ է	20
	Մատուցված մշակութային ծառայությունների հասանելիությունը համայնքի բնակիչներին, %	60	70
<b>Ոլորտ 10. Առողջապահություն</b>			
2019 թվականի ընթացքում ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել:	-	-	-
<b>Ոլորտ 11. Ֆիզիկական կուլտուրա և սպորտ</b>			
Բարելավել ֆիզիկական կուլտուրայի մասսայականացումը. Ավելացնել մարզական միջոցառումների թիվը	Մասսայական սպորտի զարգացմանն ուղղված ծրագրերի և միջոցառումների իրականացում	14	20
	Բնակչության ընդգրկվածությունը մարզական միջոցառումներին %	22	28
<b>Ոլորտ 12. Սոցիալական պաշտպանություն</b>			
Բարելավել սոցիալապես անապահով ընտանիքների սոցիալական վիճակը	Սոցիալական ծրագրերից շահառուների բավարարվածությունը	բավարար	լավ
	Սոցիալական աջակցություն ստացող անապահով ընտանիքների տեսակարար կշիռը համայնքում առկա սոցիալապես կարիքավոր ընտանիքների մեջ %	18	25
<b>Ոլորտ 13. Գյուղատնտեսություն</b>			
2019 թվականի ընթացքում ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել համայնքում գյուղատնտեսական նշանակության հողեր առկա չեն	-	-	-
<b>Ոլորտ 14. Անասնաբուժություն և</b>			

<b>բուսասանիտարիա</b>			
Ամբողջացնել համայնքում առկա անասնազվխաքանակի վերաբերյալ տեղեկատվական բազան	բազայի առկայություն	85	95
<b>Ոլորտ 15. Շրջակա միջավայրի պահպանություն</b>			
Ապահովել համայնքի բոլոր բնակավայրերում բնակչությանը աղբահանության և սանիտարական մաքրման որակյալ և մատչելի ծառայությունների մատուցումը և շրջակա միջավայրի մաքրությունը	Սանիտարական մաքրման ենթարկված տարածքների մակերեսի տեսակարար կշիռը սանիտարական մաքրման ենթակա տարածքների ընդհանուր մակերեսի մեջ, %	85	90
	Համայնքի բնակիչների բավարարվածությունը մատուցված աղբահանության և սանիտարական մաքրման ծառայություններից (հարցումների հիման վրա), %	85	95
	Համայնքում հավաքված և աղբավայր տեղափոխված աղբի քանակի տեսակարար կշիռը համայնքում առաջացած աղբի ընդհանուր քանակի մեջ, %	70	80
	Համայնքի խնամվող կանաչապատ հատվածների տեսակարար կշիռը կանաչապատ հատվածների մեջ %	65	70
<b>Ոլորտ 16. Զբոսաշրջություն</b>			
Ապահովել համայնքում զբոսաշրջության զարգացումը	Համայնք այցելած զբոսաշրջիկների բավարարվածության աստիճանը մատուցված համայնքային ծառայություններից (հարցումների հիման վրա), %	60	70
	Համայնք այցելած զբոսաշրջիկների թվի աճը նախորդ տարվա համեմատ, %	12	20
	Համայնքում հյուրատների առկայություն	18	25
	Զբոսաշրջային տարածքներում ծրագրերի ներդրում	5	8
<b>Ոլորտ 17. Տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցություն</b>			
Ապահովել բնակիչների մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը	հանրային լսումներին, քննարկումների կազմակերպում	4	8
	ավագանու նիստերի առցանց հեռարձակման առկայություն	այո	այո



## 2. Համայնքի 2019թ. ծրագրերի ցանկը և տրամաբանական հենքերը (ըստ ոլորտների)

Ստորև ներկայացված են ՏԱՊ-ի այն ծրագրերը, որոնք ապահովված են համապատասխան ֆինանսական միջոցներով:

### Աղյուսակ 3. ՏԱՊ-ի ծրագրերը, որոնք ապահովված են համապատասխան ֆինանսական միջոցներով

Հ/հ	Ծրագրի անվանումը	Ծրագրի արժեքը (հազ. դրամ)
<b>Ոլորտ 1. Ընդհանուր</b>		
1.	Համայնքի աշխատակազմի պահպանում	110800.0
2.	Ընդհանուր բնույթի համայնքային այլ ծառայությունների մատուցման բարելավում	3200.0
3.	Ընդհանուր բնույթի ծառայություններ	-
<b>Ընդամենը</b>		<b>114000.0</b>
<b>Ոլորտ 2. Պաշտպանության կազմակերպում</b>		
1.	Քաղաքացիական պաշտպանության կառավարմանն աջակցություն	-
<b>Ընդամենը</b>		<b>-</b>
<b>Ոլորտ 4. Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն</b>		
1.	Համայնքի լուսավորության ցանցի սպասարկում	3000.0
2.	Համայնքի բնակելի ֆոնդի արդյունավետ կառավարում	5000.0
3.	Կապիտալ աշխատանքների իրականացում	6000.0
4.	Փողոցային լուսավորություն	11700.0
<b>Ընդամենը</b>		<b>25700.0</b>
<b>Ոլորտ 6. Ճանապարհաշինություն</b>		
1.	Փողոցների ճանապարհների ընթացիկ նորոգում	102500.0
<b>Ընդամենը</b>		<b>102500.0</b>
<b>Ոլորտ 8. Կրթություն</b>		
1.	Համայնքում նախադպրոցական կրթության կազմակերպում	152000.0
2.	Համայնքում արտադպրոցական կրթության կազմակերպում	74000.0
<b>Ընդամենը</b>		<b>226000.0</b>
<b>Ոլորտ 9. Մշակույթ և երիտասարդության հետ տարվող աշխատանքներ</b>		
1.	Համայնքի մշակութային միջավայրի բարելավում, որակյալ ծառայությունների մատուցում	4500.0
<b>Ընդամենը</b>		<b>4500.0</b>
<b>Ոլորտ 12. Սոցիալական պաշտպանություն</b>		
1.	Համայնքի սոցիալապես անապահով բնակիչներին, կազմակերպություններին աջակցություն	11000.0
<b>Ընդամենը</b>		<b>11000.0</b>
<b>Ոլորտ 15. Շրջակա միջավայրի պահպանություն</b>		
1.	Համայնքում կոմունալ ծառայությունների մատուցում	97800.0
<b>Ընդամենը</b>		<b>97800.0</b>
<b>Ընդհանուրը</b>		<b>581500.0</b>

Ստորև ներկայացված են ՏԱՊ-ի այն ծրագրերը, որոնք ապահովված չեն համապատասխան ֆինանսական միջոցներով:

**Աղյուսակ 4. ՏԱՊ-ի ծրագրերը, որոնք ապահովված չեն համապատասխան ֆինանսական միջոցներով**

Հ/հ	Ծրագրի անվանումը	Ծրագրի արժեքը (հազ. դրամ)
<b>Ոլորտ 3. Արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանություն և քաղաքացիական պաշտպանության կազմակերպում</b>		
1.	Խորհուրդների փողոցի սելավատարի և հեղեղատարի մաքրում ողջ երկայնքով	քննարկման փուլ
2.	Ցամաքաբերդ թաղամասի Գայի փողոցի հարակից տարածքը՝ դեպի «Ախթամար» հյուրանոցային համալիր սելավատար խողովակների մաքրում, հենապատի կառուցում	քննարկման փուլ
<b>Ոլորտ 4. Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն</b>		
	Համայնքի բազմաբնակարան շենքերի տանիքների հիմնանորոգում անվտանգության ապահովում	80000.0
2	Խաղա և մարզահրապարակի կառուցում	5000.0
3	Քայլուղու և աստիճանահարթակի կառուցում, բարեկարգում	3300.0
4	Համայնքի երկու փողոցների LED լուսավորության անցկացում	քննարկման փուլ
5	Գագարինի ամբուլատորիայի վերանորոգում	բարեգործա կան
6	Համայնքի սելաֆատարների մաքրում, կոյուղու ցանցի հիմնանորոգում	14000.0
<b>Ոլորտ 6. Ճանապարհաշինություն</b>		
1.	Գոմաձոր, Ցամաքաբերդ թաղամասերը միացնող ճանապարհի հիմնանորոգում	500000.0
2	Չարենց փողոցի սկզբնամաս /Չարենց-Շահումյան խաչմերուկից մինչև Չարենց Ելենովկա խաչմերուկ/	25398.336
3	Հովհ. Թումանյան փողոցի հիմնանորոգում	57226.15
4	Գագարին գյուղի Գայի փողոցի ասֆալտապատում	28823.21
<b>Ընդամենը</b>		
<b>Ոլորտ 8. Կրթություն</b>		
1	Թիվ 1 «Բողբոջ» մսուր-մանկապարտեզի հիմնանորոգում	350000.0
2	Գագարինի մանկապարտեզի կահավորում	բարեգործա կան
<b>Ոլորտ 9. Մշակույթ և երիտասարդության հետ տարվող աշխատանքներ</b>		
1.	Երաժշտական դպրոցի շենքի ամրացում կամ դպրոցի տեղափոխում	քննարկման փուլ
2.	Ուսանողական ավտուբուսի ձեռքբերում	բարեգործա կան
<b>Ոլորտ 16. Զբոսաշրջություն</b>		
1	Համայնքում զբոսաշրջության խթանմանն ուղղված ծրագրերի իրականացում /փառատոն, տպագրական աշխատանք/	3000.0
<b>Ընդամենը</b>		
<b>Ընդհանուրը</b>		

**Աղյուսակ 5. ՏԱՊ-ով նախատեսված ծրագրերի տրամաբանական հենքերը՝ ըստ համայնքի ղեկավարի լիազորությունների ոլորտների**

Ամփոփ նկարագիր	Արդյունքային ցուցանիշներ	Տեղեկատվության աղբյուրներ	Պատասխանատու	Ժամկետ	Ռիսկեր
<b>Ոլորտ 1. Ընդհանուր</b>					
<b>Ոլորտային նպատակ</b> Ապահովել ՏԻՄ-երի կողմից համայնքի բնակչությանը համայնքային որակյալ և մատչելի ծառայությունների մատուցումը:	<b>Ոլորտի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ.</b> 1.ՏԻՄ-երի կողմից մատուցվող համայնքային ծառայությունների հասանելիությունը համայնքի բնակիչներին - 80% 2.Սեփական եկամուտների տեսակարար կշիռը համայնքի բյուջեի ընդհանուր մուտքերի կազմում – 36.8% 3,ՏԻՄ-երի գործունեության վերաբերյալ համայնքի բնակիչների իրազեկվածության մակարդակը - 55 %				
<b>Ծրագիր 1. Համայնքի աշխատակազմի պահպանում</b>					
<b>Ծրագրի նպատակ</b> Ապահովել ՏԻՄ-երի, աշխատակազմի արդյունավետ գործունեությունը, թափանցիկ կառավարումը և բնակչությանը ծառայությունների մատուցումը:	<b>Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ.</b> 1. ՏԻՄ-երը, աշխատակազմը, բնականոն գործել են, բարելավվել է բնակչությանը մատուցված հանրային ծառայությունների մատչելիությունը և որակը 2.Համայնքի բյուջեի սեփական եկամուտների տեսակարար կշիռը համայնքի բյուջեի ընդհանուր մուտքերի կազմում – 36.8%	<b>Ծրագրի գնահատման համակարգ</b> կիսամյակային և տարեկան հաշվետվություններ	Համայնքի ղեկավար, աշխատակազմի քարտուղար,	2019թ. հունվար–դեկտեմբեր	մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների ոչ բավարար վիճակ
<b>Միջանկյալ արդյունքներ.</b> Ապահովվել է ՏԻՄ-երի, աշխատակազմի բնականոն և արդյունավետ գործունեությունը, թափանցիկ կառավարումը և բնակչությանը ծառայությունների մատուցումը, աճել է համայնքի բյուջեի սեփական եկամուտների տեսակարար կշիռը համայնքի բյուջեի ընդհանուր մուտքերի կազմում:		<b>Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ ժամկետ)</b> 1, Համայնքապետարանի աշխատակազմի աշխատողների թիվը - 49 2. 1. ՏԻՄ-երի գործունեության վերաբերյալ բնակիչների իրազեկվածության մակարդակը աճել է 3, Համայնքապետարանի աշխատակազմի աշխատանքային օրերի թիվը տարվա ընթացքում, 249			<b>Տեղեկատվական աղբյուրներ</b> Աշխատակազմ, կիսամյակային, տարեկան հաշվետվություններ, ՀԿ-ներ, բնակիչներ

		օր			
<b>Միջոցառումներ (գործողություններ)</b> 1.ՏԻՄ-երի, համայնքապետարանի աշխատակազմի արդյունավետ և թափանցիկ գործունեության ապահովում 2. Աշխատակազմի կողմից տեղական ինքնակառավարման մարմինների համար օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված լիազորությունների և քաղաքացիական իրավահարաբերությունների իրականացում 3. Մարդկային ռեսուրսների կառավարման նոր գործիքների ներդրում		<b>Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ)</b> 1,Համայնքի տարեկան բյուջեով նախատեսված պահպանման ծախսեր 110800.0 <b>հազ. դրամ</b> 2.Համայնքապետարանի վարչական շենք և գույք			
<b>Ծրագիր 2. Ընդհանուր բնույթի համայնքային այլ ծառայությունների բարելավում</b>					
<b>Ծրագրի նպատակ</b> Ապահովել համայնքային ծառայությունների արդյունավետ, թափանցիկ կառավարումը, ենթակառուցվածքների գործունեության պահպանումը և ՔԿԱԳ-ի արդյունավետ աշխատանքը:	<b>Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ.</b> Ապահովվել է համայնքային ծառայությունների արդյունավետ, թափանցիկ կառավարումը, ենթակառուցվածքների գործունեության պահպանումը և ՔԿԱԳ-ի արդյունավետ աշխատանքը	<b>Ծրագրի գնահատման համակարգ</b> կիսամյակային և տարեկան հաշվետվություններ , համայնքապետարանի աշխատակազմ	Աշխատակազմի քարտուղար, ՔԿԱԳ բաժնի պետ, ֆինանսական բաժնի պետ,	2019թ. հունվար–դեկտեմբեր	Համապատասխան մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների անբավարարություն
<b>Միջանկյալ արդյունքներ .</b> 1.Բարելավվել է բնակչությանը մատուցվող հանրային ծառայությունների որակը և մատչելիությունը: 2. ՔԿԱԳ Սևանի տարածքային բաժնի կողմից իրականացվող գործառույթները կատարվում է առավել արագ և որակյալ		<b>Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ)</b> 1,Տարվա ընթացքում ՔԿԱԳ-ի կողմից սպասարկված հաճախորդների թիվը, 1241 մարդ. 2, ՔԿԱԳ-ի աշխատանքային օրերի թիվը տարվա ընթացքում, 249 օր 3,Համայնքում կիրառվող համակարգչային ծրագրերի թարմացման հաճախականությունը, 4, 6 ամիսը մեկ անգամ		<b>Տեղեկատվական աղբյուրներ</b> Աշխատակազմ, կիսամյակային, տարեկան հաշվետվություններ, քաղաքացիական ՀԿ-ներ, բնակիչներ	
<b>Միջոցառումներ (գործողություններ)</b> 1,Քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցումներ 2.Համակարգչային ծառայությունների ձեռք բերում		<b>Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ)</b> 1. Գույքային հարկերի հաշվառման ծրագրային ավտոմատացված համակարգի և ՀԿՏՀ ծրագրի առկայություն - առկա է 3, Համայնքի պաշտոնական համացանցային կայք - առկա է 4, Համայնքի աշխատակազմում օգտագործվող համակարգիչների թիվը - 17 <b>Ֆինանսավորման աղբյուրը`</b> համայնքի բյուջեի միջոցներ			
<b>Ծրագիր 3. Համայնքի սեփականություն հանդիսացող գույքի կառավարում և տեղեկատվական ծառայությունների մատուցում</b>					
<b>Ծրագրի նպատակ</b> Ունենալ համայնքի սեփականություն	<b>Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ.</b>	<b>Ծրագրի գնահատման համակարգ</b>	Աշխատակազմի քարտուղար, ճարտարապետաշինարարական և	2019թ. հունվար–2019թ. դեկտեմբեր	Համապատասխան մարդկային, նյութական և

<p>հանդիսացող գույքի կառավարման և տեղեկատվական ծառայությունների մատուցման համակարգ</p>	<p>Համայնքի գույքի կառավարման և տեղեկատվական ծառայությունների մատուցման համակարգի առկայությունը – առկա է</p>	<p>կիսամյակային և տարեկան հաշվետվություններ, համայնքապետարանի աշխատակազմ, ՏՁՎԿ ՀԿ, ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ Սևանի ս/գ</p>	<p>Ֆինանսատնտեսագիտական բաժնի պետեր</p>	<p>Ֆինանսական ռեսուրսների անբավարարություն</p>	
<p><b>Միջանկյալ արդյունքներ.</b> 1.Արագացել է համայնքային գույքի գնահատման և գրանցման գործընթացը: 2.Բարելավվել է քաղաքացիների սպասարկման որակն ու արագությունը:</p>	<p><b>Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ)</b> 1, Անշարժ գույքի գրանցումների քանակը - 30 2,Համայնքի սեփականություն համարվող անշարժ գույքի կառավարման, չափագրման, պետական գրանցման աշխատանքների թափանցիկության և հրապարակայնության մակարդակի բարձրացում - 40 % - ով 3, Հողի հարկի և գույքահարկի բազայում առկա անճշտությունների նվազեցում- 80 % 4.Ծրագրի իրականացման ժամկետը -1 տարի 5.Համայնքապետարանի հետ համագործակցող կազմակերպությունների քանակը - 4</p>	<p><b>Տեղեկատվական աղբյուրներ</b> Աշխատակազմ, ՏՁՎԿ ՀԿ, ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ Սևանի ս/գ, կիսամյակային և տարեկան հաշվետվություններ, քաղաքացիական հասարակության կազմակերպություններ և բնակիչներ</p>			
<p><b>Միջոցառումներ (գործողություններ)</b> 1, Տեղեկատվական ծառայությունների ձեռքբերում:</p>	<p><b>Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ)</b> 1.Աշխատակազմի վարչական, ֆինանսական, տեղեկատվական, հեռահաղորդակցության և այլ համակարգեր –առկա է 3. Աշխատակազմի կառավարման համակարգեր – առկա է 4. Համայնքի պաշտոնական համացանցային կայք – առկա է <b>Ֆինանսավորման աղբյուրը՝</b> համայնքի բյուջեի միջոցներ</p>				
<p><b>Ծրագիր 4. Ճանապարհաշինություն</b></p>					
<p><b>Ծրագրի նպատակ</b> Բարելավել ներհամայնքային ճանապարհների վիճակը, ապահովել բնակիչների, տրանսպորտի անվտանգ տեղաշարժը:</p>	<p><b>Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ.</b> Բարեկարգված և ասֆալտապատված համայնքային ճանապարհներ – առկա է</p>	<p><b>Ծրագրի գնահատման համակարգ</b> կիսամյակային և տարեկան հաշվետվություններ</p>	<p>Համայնքի ղեկավար, ճարտարապետա-շինարարական և ֆինանսատնտեսագիտական բաժնի պետեր</p>	<p>2019թ. ապրիլ-հոկտեմբեր</p> <p>Համապատասխան մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների անբավարարություն, եղանակային պայմաններ</p>	
<p><b>Միջանկյալ արդյունքներ</b> Առկա է ճանապարհների ասֆալտապատում և փոսային նորոգում</p>	<p><b>Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ)</b> 1.Ասֆալտապատված ճանապարհներ - 4</p>	<p><b>Տեղեկատվական աղբյուրներ</b> Աշխատակազմ, կիսամյակային,</p>			

	2. Փոսային նորոգում – 11	տարեկան հաշվետվություններ
<b>Միջոցառումներ (գործողություններ)</b> 1, Տրանսպորտային սարքավորումների ձեռք բերում 2. Համակարգչային տեխնիկայի և վարչական սարքավորումների ձեռք բերում	<b>Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ)</b> 1. Համայնքի բյուջեով նախատեսված ծախսեր՝ 102500.0 <b>հազ. դրամ</b> 2. Ծրագրի իրականացման հարցերով զբաղվող աշխատակազմի աշխատակիցներ - 6 <b>Ֆինանսավորման աղբյուրը՝</b> համայնքի բյուջեի միջոցներ	
<b>Ոլորտ 2. Պաշտպանության կազմակերպում</b>		
<b>Ոլորտային նպատակ</b> Նպաստել երկրի պաշտպանունակության մակարդակի բարձրացմանը:	<b>Ոլորտի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ</b> 1. Համայնքում բնակվող զինապարտ քաղաքացիների գրանցամատյանի վարումը - այո 2. Զորակոչիկների բավարարվածությունը մատուցված ծառայություններից - 85 %	
<b>Ծրագիր 1. Քաղաքացիական պաշտպանության կառավարմանն աջակցություն</b>		
<b>Ծրագրի նպատակ</b> Նպաստել երկրի պաշտպանունակության մակարդակի բարձրացմանը:	<b>Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ</b> Զորակոչիկների ծնողների բավարարվածությունը համայնքի կողմից իրականացված աջակցության միջոցառումներից - բավարար	<b>Ծրագրի գնահատման համակարգ</b> կիսամյակային, տարեկան հաշվետվություններ
	Աշխատակազմի քարտուղար	2019թ. հունվար-դեկտեմբեր
		Համապատասխան մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների անբավարարություն
<b>Միջանկյալ արդյունքներ</b> Բարելավվել են զորակոչիկների կենցաղային պայմանները:	<b>Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ)</b> 1. Աշխատակազմում զորակոչի հարցերով զբաղվող աշխատակիցների թիվը – 4 2. Նվերներ ստացած զորակոչիկների թիվը, 49 մարդ 3, Ձեռքբերված նվերների քանակը, 49 հատ 4. Զորակոչիկների բավարարվածությունը մատուցված ծառայություններից- լավ 5. Ծրագրի իրականացման ժամկետը - 1 տարի	<b>Տեղեկատվական աղբյուրներ</b> Աշխատակազմ, կիսամյակային, տարեկան հաշվետվություններ, Սևանի տարածաշրջանի զինկոմիսարիատ, զորակոչիկներ, ծնողներ
<b>Միջոցառումներ (գործողություններ)</b> 1, Զորակոչիկների համար նվերների ձեռք բերում:	<b>Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ)</b> 1. ոլորտի պատասխանատու աշխատակիցների թիվը - 3 2. <b>Ֆինանսավորման աղբյուրը՝</b> բարեգործություն	
<b>Ոլորտ 4. Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն</b>		
<b>Ոլորտային նպատակ</b> Իրականացնել համայնքի բնակֆոնդի արդյունավետ կառավարումը և արտաքին լուսավորության և ջրամատակարարման ցանցերի պահպանումը:	<b>Ոլորտի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ</b> 1, Նորոգված տանիքներ ունեցող բազմաբնակարան շենքերի տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ - 40% 2. Նորոգված մուտքեր ունեցող բազմաբնակարան շենքերի տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ - 21 % 4, Գիշերային լուսավորված փողոցների տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ - 75% 5, Համայնքում էներգախնայող լամպերով լուսավորված տարածքների մակերեսի	

	տեսակարար կշիռը լուսավորված տարածքների ընդհանուր մակերեսի մեջ - 12 % 6, Համայնքի բնակիչների բավարարվածությունը մատուցված ջրամատակարարման ծառայություններից - 90%
--	---

**Ծրագիր 1. Համայնքում լուսավորության ցանցի սպասարկում**

<b>Ծրագրի նպատակ</b> Ապահովել համայնքի արտաքին լուսավորության համակարգի ընդլայնումը, պահպանումը, սպասարկում և բարելավումը, երկու փողոցների LED լուսավորություն ապահովում	<b>Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ</b> Բնակիչների բավարարվածությունը համայնքում գիշերային լուսավորվածությունից - լավ	<b>Ծրագրի գնահատման համակարգ</b> կիսամյակային և տարեկան հաշվետվություններ	Համայնքի ղեկավարի խորհրդական, «Սևան համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում» ՀՈԱԿ ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ,	2019թ. հունվար-դեկտեմբեր	Համապատասխան մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների անբավարարություն
<b>Միջանկյալ արդյունքներ.</b> Սևան համայնքի փողոցները դարձել են լուսավոր և անվտանգ		<b>Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ)</b> 1, Գիշերային լուսավորության հենասյուների թիվը, 649սյուն 2, Գիշերային լուսավորով փողոցների տեսակարար կշիռը ընդհանուրի մեջ. 75% 3, Գիշերային լուսավորվածության ժամերի թիվը օրվա կտրվածքով, 6 ժամ 4. Ծրագրի իրականացման ժամկետը – 1 տարի			<b>Տեղեկատվական աղբյուրներ</b> Աշխատակազմ, «Սևան համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում» ՀՈԱԿ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ, բնակիչներ
<b>Միջոցառումներ (գործողություններ)</b> 1. Սևան համայնքում լուսավորության ցանցի ընդլայնում և սպասարկում		<b>Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ)</b> 1. Համայնքի բյուջեով նախատեսված ծախսերը 11700.0 հազ. դրամ, 2. Համապատասխան տեխնիկայի և սարքավորումների առկայություն <b>Ֆինանսավորման աղբյուրը՝</b> համայնքի բյուջեի միջոցներ			

**Ծրագիր 2. Համայնքում բնակելի ֆոնդի արդյունավետ կառավարում**

<b>Ծրագրի նպատակ</b> Բարելավել համայնքի բազմաբնակարան շենքերի օգտագործման պիտանելիության ժամկետը և ապահովել բնակֆոնդի արդյունավետ կառավարումը	<b>Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ</b> Ներդրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի պահպանման և արդյունավետ կառավարման համակարգ- առկա է	<b>Ծրագրի գնահատման համակարգ</b> կիսամյակային, տարեկան հաշվետվություններ	Համայնքի ղեկավարի խորհրդական, համատիրություններ	2019թ. հունվար-2019թ. դեկտեմբեր	Համապատասխան մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների անբավարարություն
<b>Միջանկյալ արդյունքներ</b> Ապահովվել է բազմաբնակարան բնակելի շենքերի սպասարկումը և արդյունավետ կառավարումը:		<b>Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ)</b> 1, Սպասարկված բազմաբնակարան շենքերի քանակը – 213 շենք 2, Մատուցված ծառայությունների			<b>Տեղեկատվական աղբյուրներ</b> Համայնքի ղեկավարի խորհրդական, ֆինանսատնտեսագիտ

	համապատասխանությունը օրենսդրական պահանջներին - այո 3. Բազմաբնակարան շենքերի պարտադիր նորմերի կատարման վճարի չափը քառակուսի մետրի համար - 8 դրամ 4. Ծրագրի իրականացման ժամկետը - 1 տարի	ական բաժնի պետ, համատիրությունների նախագահներ, բնակիչներ
<b>Միջոցառումներ (գործողություններ)</b> 1, բնակարանային ֆոնդի սպասարկում 5 համատիրությունների և «Յունոնա» ՓԲԸ-ի միջոցով	<b>Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ)</b> 1. Համայնքի բյուջեով նախատեսված ծախսեր՝ 5000.0 հազ. դրամ, 2. Համատիրությունների աշխատակիցներ - 13 3. Համայնքային տեխնիկա 4. Վարձավճարների հավաքագրում <b>Ֆինանսավորման աղբյուրը՝</b> համայնքի բյուջեի միջոցներ, վարձավճարների հավաքագրումներ	
<b>Ծրագիր 3. Կապիտալ աշխատանքների իրականացում</b>		
<b>Ծրագրի նպատակ</b> Ունենալ բարեկարգ տանիքներով և շքամուտքերով բնակարանային ֆոնդ	<b>Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ</b> 1. բնակելի շենքերի շքամուտքերը հիմնանորոգվել են - առկա է 2. բազմաբնակարան շենքերի տանիքները նորոգվել են - առկա է	<b>Ծրագրի գնահատման համակարգ</b> կիսամյակային, տարեկան հաշվետվություններ
	Համայնքի ղեկավարի խորհրդական, համատիրությունների նախագահներ, ճարտարապետաշինարարական բաժնի պետ,	2019թ. հունվար-2019թ. դեկտեմբեր
		Համապատասխան մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների անբավարարություն
<b>Միջանկյալ արդյունքներ</b> 1. Վերանորոգվել են շենքերի շքամուտքերը: 2. Հիմնանորոգվել են բազմաբնակարան շենքերի տանիքները:	<b>Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ)</b> 1. Վերանորոգված շքամուտքերով շենքերի քանակը - 29 2. Վերանորոգված շքամուտքերի քանակը - 33 3. Վերանորոգված տանիքներ ունեցող բազմաբնակարան շենքերի քանակը - 22, մասնակի - 59 4. Բնակիչների բավարարվածությունը բնակարանային շինարարության ոլորտում մատուցված ծառայություններից - լավ 5. Ծրագրի իրականացման ժամկետը - 1 տարի	<b>Տեղեկատվական աղբյուրներ</b> համատիրությունների նախագահներ, աշխատակազմ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ, բնակիչներ
<b>Միջոցառումներ (գործողություններ)</b> 1. Շենքերի շքամուտքերի և տանիքների վերանորոգում	<b>Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ)</b> 1. Համայնքի բյուջեով նախատեսված ծախսերը - 5000.0 հազ. դրամ 2. Համայնքային տեխնիկա և գույք 3. Պարտադիր նորմերի իրականացման համար գումարների հավաքագրում <b>Ֆինանսավորման աղբյուրը՝</b> համայնքի բյուջեի միջոցներ, հավաքագրումներ, բարերարություն, հրատապ ծրագրեր, դոնոր կազմակերպություններ	
<b>Ծրագիր 4. Փողոցային լուսավորության</b>		



<p><b>Ծրագրի նպատակ</b> Ունենալ գիշերային լուսավորության ունեցող փողոցներ, միաժամանակ ապահովել էներգախնայողության բաղադրիչը</p>	<p><b>Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ</b> Բնակիչների և զբոսաշրջիկների բավարարվածությունը համայնքում և պատմաճարտարապետական օբյեկտներում գիշերային լուսավորվածությունից - լավ</p>	<p><b>Ծրագրի գնահատման համակարգ</b> կիսամյակային, տարեկան հաշվետվություններ</p>	<p>Համայնքի ղեկավար, «Սևան համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում» ՀՈԱԿ</p>	<p>2019թ. հունվար-2019թ. դեկտեմբեր</p>	<p>Համապատասխան մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների անբավարարություն</p>
<p><b>Միջանկյալ արդյունքներ</b> Համայնքի փողոցների զգալի մասը լուսավորված է</p>		<p><b>Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ)</b> 1. Լուսավորված փողոցների թիվը - 19 3. Գիշերային լուսավորության հենասյունների թիվը - 649 սյուն 4. Գիշերային լուսավորված փողոցների տեսակարար կշիռը ընդհանուրի մեջ - 65 % 5. Ծրագրի իրականացման ժամկետը -1 տարի</p>	<p><b>Տեղեկատվական աղբյուրներ</b> «Սևան համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում» ՀՈԱԿ աշխատակազմ, կիսամյակային, տարեկան հաշվետվություններ բնակիչներ</p>		
<p><b>Միջոցառումներ (գործողություններ)</b> 1. Սևան համայնքի փողոցային լուսավորության ցանցերի կառուցում</p>		<p><b>Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ)</b> 1. Մշակված և հաստատված ծրագիր – առկա է 2. Ծրագրի իրականացման հարցերով զբաղվող աշխատակազմի աշխատակիցներ - 2 3. համայնքային բյուջեի միջոցների տրամադրում -9500.0 հազ. դրամ 4. Համայնքային տեխնիկա <b>Ֆինանսավորման աղբյուրը`</b> Համայնքային բյուջե</p>			
<p><b>Ոլորտ 6. Ճանապարհաշինություն</b></p>					
<p><b>Ոլորտային նպատակ</b> Բարելավել ներհամայնքային ճանապարհների անցանելիության մակարդակը և ապահովել բնակիչների անվտանգ տեղաշարժը:</p>	<p><b>Ոլորտի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ</b> 1. Ընթացիկ նորոգված ներհամայնքային ճանապարհների և փողոցների տեսակարար կշիռն ընդհանուրի կազմում - 60 % 2. Համայնքային ենթակառուցվածքային ճանապարհների և փողոցներում տեղադրված ճանապարհային նշանների թվի տեսակարար կշիռը անհրաժեշտ ճանապարհային նշանների մեջ - 45%</p>				
<p><b>Ծրագիր 1. Փողոցների ճանապարհների ընթացիկ նորոգում</b></p>					
<p><b>Ծրագրի նպատակ</b> Ասֆալտապատել և բարեկարգել Չարենց փողոցի սկզբնամասը, Յամաքաբերդ, Գոմաձոր թաղամասերը միացնող ճանապարհը, Գոմաձոր,</p>	<p><b>Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ</b> Ապահովվել է Ծրագրի նպատակ բաժնում նշված փողոցների,</p>	<p><b>Ծրագրի գնահատման համակարգ</b> կիսամյակային, տարեկան հաշվետվություններ</p>	<p>Համայնքի ղեկավար, ֆինանսատնտեսագիտական և ճարտարապետաշինարարական բաժինների պետեր</p>	<p>2019թ. ապրիլ-հոկտեմբեր</p>	<p>Համապատասխան մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների անբավարարություն</p>

<p>Ցամաքաբերդ թաղամասերի, Գագարին գյուղի Գայի փողոցները, Ուրենգոյ թաղամաս տանող Հովհ. Թումանյան փողոցը, Նաիրյան, Խաղաղության, Նալբանդյան, Գրիբոյեդով, Ս. Սևանեցի, Հրազդան, Աբովյան, Կ. բանակ փողոցներում և 2. Անդրանիկի անվան հրապարակում կատարել ճաքալցում և փոսային նորոգում, որի արդյունքում երթևեկությունը և մարդկանց տեղաշարժը դարձել է անցանելի և անվտանգ</p>	<p>ճանապարհների անցանելիությունը, առկա են բարեկարգ ճանապարհներ</p>				
<p><b>Միջանկյալ արդյունքներ</b> փողոցները դարձել են անվտանգ անցանելի և հարմարավետ:</p>	<p><b>Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ)</b> 1.Սևան համայնքում առկա փողոցների թիվը - 93 2.Ասֆալտապատ փողոցների երկարությունը – 54.118 կմ 3.2018թ. նորոգված Չարենց, Հրազդան փողոցների երկարությունը - 3039մ 4. Բնակիչների բավարարվածությունը վերանորոգված այդ ճանապարհների վիճակից - լավ 5. Ծրագրի իրականացման ժամկետը – 6 ամիս</p>	<p><b>Տեղեկատվական աղբյուրներ</b> աշխատակազմ, կիսամյակային, տարեկան հաշվետվություններ, բնակիչներ, քաղաքի հյուրեր</p>			
<p><b>Միջոցառումներ (գործողություններ)</b> 1, Կազմել Չարենց փողոցի սկզբնամասի, Ցամաքաբերդ, Գոմաձոր թաղամասերը միացնող ճանապարհի, Գոմաձոր, Ցամաքաբերդ թաղամասերի, Գագարին գյուղի Գայի փողոցների, Ուրենգոյ թաղամաս տանող Հովհ. Թումանյան փողոցի ասֆալտապատման, ճաքալցման և փոսային նորոգման ենթակա 10 փողոցի և հրապարակի նախագծա-նախահաշվային փաստաթղթերը: 2.Վերահսկել փողոցների և ճանապարհների նորոգման աշխատանքները: 3.Աշխատանքների կատարման ավարտական ակտերը կազմել, քննարկել և հաստատել:</p>	<p><b>Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ)</b> 1. Ծրագրի իրականացման հարցերով զբաղվող աշխատակազմի աշխատակիցներ – 5 <b>Ֆինանսավորման աղբյուրը`</b> համայնքային բյուջե, ՀՀ կառավարությունից տրամադրված ֆինանսական միջոցներ</p>				
<p><b>Ծրագիր 2. Փողոցների և մայրերի փոսային նորոգում</b></p>					
<p><b>Ծրագրի նպատակ</b> Բարեկարգել Սևան քաղաքի փողոցները, ներհամայնքային</p>	<p><b>Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ</b></p>	<p><b>Ծրագրի գնահատման համակարգ</b> կիսամյակային,</p>	<p>Համայնքի ղեկավար, համայնքի ղեկավարի</p>	<p>2019թ. ապրիլ-հոկտեմբեր</p>	<p>Համապատասխան մարդկային, նյութական և</p>

<p>ճանապարհները, դրանք դարձնել անցանելի ու հարմարավետ հետիոտների և տրանսպորտային միջոցների երթևեկության համար:</p>	<p>Սևան քաղաքի փողոցները դարձել են անցանելի ու հարմարավետ հետիոտների և տրանսպորտային միջոցների երթևեկության համար - 90 %</p>	<p>տարեկան հաշվետվություններ</p>	<p>օգնական, ֆինանսատնտեսագիտական և ճարտարապետա-շինարարական բաժինների պետեր</p>	<p>ֆինանսական ռեսուրսների անբավարարություն</p>	
<p><b>Միջանկյալ արդյունքներ</b> 1. Սևան քաղաքի փողոցները դարձել են բարեկարգ և հարմարավետ հետիոտների և տրանսպորտային միջոցների երթևեկության համար տարվա բոլոր եղանակներին:</p>	<p><b>Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ)</b> 1. Ճանապարհային երթևեկության նշաններով նշագծված փողոցների թիվը – 11 2. Ճանապարհատրանսպորտային պատահարների թվի նվազեցում 30 % 3. Բարեկարգ և անցանելի փողոցների մակերեսի տեսակարար կշիռն ընդհանուրի կազմում – 50 % 4. Ծրագրի իրականացման ժամկետը – 6 ամիս</p>	<p><b>Տեղեկատվական աղբյուրներ</b> աշխատակազմ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ, բնակիչներ</p>			
<p><b>Միջոցառումներ (գործողություններ)</b> 1. Աշխատանքների իրականացման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի պատվիրում: 2. Սևան համայնքի փողոցների և ճանապարհների կապիտալ վերանորոգման աշխատանքների իրականացում: 3. Աշխատանքների կատարման ավարտական ակտերը կազմում, քննարկում և հաստատում:</p>	<p><b>Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ)</b> 1. Համայնքի բյուջեով նախատեսված ծախսեր, 102500.0 հազ. դրամ 2. Նախագծա-նախահաշվային փաստաթղթեր – առկա են 3. Ծրագրի իրականացման հարցերով զբաղվող աշխատակազմի աշխատակիցներ – 6 <b>Ֆինանսավորման աղբյուրը՝</b> համայնքի բյուջեի միջոցներ</p>				
<p><b>Ծրագիր 1. Համայնքում նախադպրոցական կրթության կազմակերպում</b></p>					
<p><b>Ծրագրի նպատակ</b> Ապահովել համայնքի բնակչությանը նախադպրոցական կրթության որակյալ ծառայությունների մատուցումը:</p>	<p><b>Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ</b> Ապահովվել է համայնքի բնակչությանը նախադպրոցական կրթության ծառայությունների մատուցումը և հասանելիությունը – լավ</p>	<p><b>Ծրագրի գնահատման համակարգ</b> կիսամյակային, տարեկան հաշվետվություններ</p>	<p>Համայնքի ղեկավար, աշխատակազմ, համայնքի ՆՈՒՀ ՀՈԱԿ-ների տնօրեններ,</p>	<p>2019թ. հունվար-դեկտեմբեր</p> <p>Համապատասխան նյութական և ֆինանսական ռեսուրսների անբավարարություն</p>	
<p><b>Միջանկյալ արդյունքներ</b> Ապահովվել է Սևան համայնքի 5 նախադպրոցական ուսումնական հաստատություն ՀՈԱԿ-ների և թիվ 1 «Բողբոջ» մանկապարտեզի հենքի վրա գործող նախակրթարանի բնականոն աշխատանքը</p>	<p><b>Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ)</b> 1. ՆՈՒՀ ՀՈԱԿ-ների խմբերի թիվը - 16 խումբ 2. ՆՈՒՀ ՀՈԱԿ-ներ հաճախող երեխաների թիվը - 475 երեխա</p>	<p><b>Տեղեկատվական աղբյուրներ</b> Աշխատակազմ, համայնքի ՆՈՒՀ ՀՈԱԿ-ների աշխատակազմեր կիսամյակային,</p>			

	<p>3. Նախակրթարան հաճախող երեխաների թիվը – 72</p> <p>4. Ջեռուցման համակարգի ունեցող ՆՈՒՀ ՀՈԱԿ-ների թիվը – 3</p> <p>5. Նախադպրոցական կրթության ծառայության մատուցման ամիսները տարվա ընթացքում – 11</p> <p>6. Մատուցված ծառայության համապատասխանությունը օրենսդրական պահանջներին, սահմանված նորմատիվներին, կարգերին և չափորոշիչներին - ամբողջությամբ</p>	<p>տարեկան հաշվետվություններ, բնակիչներ (ծնողներ)</p>
--	--	---

<p><b>Միջոցառումներ (գործողություններ)</b></p> <p>«թիվ 1 «Բողբոջ» մ/մ»</p> <p>«թիվ 2 «Ձարթոնք» մ/մ»</p> <p>«թիվ 3 «Հեքիաթ» մ»</p> <p>«թիվ 4 «Գալիբ» մ/մ»</p> <p>«Գագարինի» մ/մ» ՀՈԱԿ-ներում կրթադաստիարակչական աշխատանքների իրականացում, խնամքի կազմակերպում, կահավորում</p>	<p><b>Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ)</b></p> <p>1. ՆՈՒՀ ՀՈԱԿ-ների շենքեր և գույք</p> <p>2. Համայնքի բյուջեով նախատեսված ՆՈՒՀ ՀՈԱԿ-ների պահպանման և սննդի ծախսեր 152000.0 հազ. դրամ</p> <p><b>Ֆինանսավորման աղբյուրը`</b> համայնքի բյուջեի միջոցներ, բարեգործություն</p>
--	--

**Ծրագիր 2. Համայնքում արտադպրոցական կրթության կազմակերպում**

<p><b>Ծրագրի նպատակ</b></p> <p>Ապահովել արտադպրոցական դաստիարակության ծառայության մատուցումը և հասանելիությունը:</p>	<p><b>Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ</b></p> <p>«Հովհ. Այվազովսկու անվան արվեստի դպրոց», «Ն. Դագարյանի անվան մանկապատանեկան մարզադպրոց», «Վ. Սարգսյանի անվան երաժշտական դպրոց», «Համայնքային մշակութային կենտրոն» ՀՈԱԿ-ների գործունեությամբ ապահովվել է համայնքի բնակչությանը մատուցվող արտադպրոցական դաստիարակության ծառայությունների մատուցումը և հասանելիությունը - բավարար</p>	<p><b>Ծրագրի գնահատման համակարգ</b></p> <p>կիսամյակային, տարեկան հաշվետվություններ</p>	<p>Համայնքի ղեկավար, աշխատակազմի ԿՄՍԵՀ բաժին, համայնքի արտադպրոցական կազմակերպությունների</p>	<p>2019թ. հունվար–2019թ. դեկտեմբեր</p>	<p>Համապատասխան մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների անբավարարություն</p>
--	---	--	---	--	--

<p><b>Միջանկյալ արդյունքներ</b></p> <p>Ապահովվել է համայնքում գործող ՀՈԱԿ-ների</p>	<p><b>Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ)</b></p> <p>1. «Հովհ. Այվազովսկու անվան արվեստի դպրոց», հաճախող մեկ երեխայի համար գանձվող ամսական վճարի չափը -</p>	<p><b>Տեղեկատվական աղբյուրներ</b></p> <p>Աշխատակազմի ԿՄՍԵՀ</p>
--	---	--

բնականոն գործունեությունը:	<p>200/500 դրամ</p> <p>2. «Ն. Դագարյանի անվան մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ի կողմից ծառայության մատուցման ամիսների թիվը տարվա ընթացքում, 11 ամիս</p> <p>3. Մարզադպրոց հաճախող սաների թիվը – 330 երեխա «Վ. Սարգսյանի անվան երաժշտական դպրոց» ՀՈԱԿ հաճախող երեխաների թիվը, 171 երեխա</p> <p>4. Համայնքում երաժշտական դպրոց հաճախող երեխաների թվի տեսակարար կշիռը դպրոցահասակ երեխաների թվի մեջ, 9%</p>	բաժին, համայնքի արտադպրոցական կազմակերպությունների աշխատակազմեր, կիսամյակային և տարեկան հաշվետվություններ, բնակիչներ (ծնողներ)
----------------------------	---	--

<p><b>Միջոցառումներ (գործողություններ)</b></p> <p>1. «Հովի. Այվազովսկու անվան արվեստի դպրոց» ՀՈԱԿ-ի կողմից մատուցվող ծառայությունների ընթացիկ մակարդակի պահպանում</p> <p>2. «Ն. Դագարյանի անվան մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ի կողմից մատուցվող ծառայությունների ընթացիկ մակարդակի պահպանում</p> <p>3. «Վ. Սարգսյանի անվան երաժշտական դպրոց», ՀՈԱԿ-ի կողմից մատուցվող ծառայությունների ընթացիկ մակարդակի պահպանում</p> <p>4. «Համայնքային մշակութային կենտրոն» ՀՈԱԿ-ի աշխատանքների բարելավում</p> <p>5. ՀՈԱԿ-ների գործունեության ապահովման համար համապատասխան տարածքների և շենքային պայմանների բարելավում, հիմնանորոգում</p>	<p><b>Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ)</b></p> <p>1. Համայնքի արտադպրոցական ՀՈԱԿ-ների աշխատակիցների թիվը - 106</p> <p>2. ՀՈԱԿ-ների պահպանման ծախսեր 74000.0 հազ. դրամ</p>
---	--

**Ոլորտ 9. Մշակույթ և երիտասարդության հետ տարվող աշխատանքներ**

